Նախագիծ

2-րդ ընթերցում

Կ-638-12.07.2023-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զենքի շրջանառության կարգավորման մասին» 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՕ-368-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Սույն օրենքի դրույթները տարածվում են նաև զենքի փամփուշտների և հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի շրջանառության վրա:»:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետը:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, ռազմամարզության» բառը:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետից հանել «, ռազմամարզությամբ» բառը:

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 1-ին կետում «զենք» բառից հետո լրացնել «և հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր» բառերը, իսկ «թույլտվություն» բառը փոխարինել «թույլտվություններ» բառով,

2) 4-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) քաղաքացիական զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր և փամփուշտներ ձեռք բերելու թույլտվություն՝ ինգօրյա գործողության ժամկետով.»,

3) 13-րդ մասում «բացառությամբ» բառից հետո լրացնել «2-րդ և» բառերը

4) 13-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից քաղաքացիական կամ ծառայողական զենք պահելու և կրելու գործող թույլտվություն ունենալու պայմաններում նոր զենք ձեռք բերելու, պահելու և կրելու թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության ոստիկանություն չեն ներկայացնում սույն հոդվածի 11-րդ մասի 2-րդ, 5-րդ և 7-րդ կետերով նշված փաստաթղթերը:»,

5) լրացնել 20-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«20. Սույն հոդվածի գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սպայական կազմի զինծառայողներին որպես պարգևատրում, ինչպես նաև զինվորական հանդերձանքի պարտադիր մաս կազմելու դեպքում՝ այլ զինծառայողներին ժամանակավորապես դաշույների (սպայական կազմի զինծառայողների մասով՝ այսուհետ՝ սպայական դաշույն) տրման վրա:»:

Հոդված 6. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «ռազմամարզական» բառը, ինչպես նաև «, որսորդական տնտեսություն վարող» բառերը հանել:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց բոլոր աշխատողները պարտավոր են երեք տարին մեկ անցնել զենքի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու՝ իրենց պիտանիությունը որոշող ստուգարքներ:» նախադասությունը, իսկ «անցկացնելու կարգը» բառերից հետո լրացնել «սահմանում է» բառերը:

Հոդված 8. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Բացառությամբ սառը և նետողական զենքերի, առաջին անգամ զենք, այդ թվում՝ առաջին անգամ ակոսափող հրազեն ձեռք բերող քաղաքացին, պարտավոր է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի բնագավառում պետական լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով հանձնել զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննություն: Քննությունից ազատվում է այն քաղաքացին, ով ծառայում է Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպություններում և ունի զենք պահելու և կրելու իրավունք:

Պետական մարմինների կողմից քննություն անցկացնելու դեպքում սահմանվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով:»,

2) 7-րդ մասի 7-րդ կետում «կանոնները» բառից հետո լրացնել «մեկ տարվա ընթացքում կրկնակի» բառերը, իսկ «՝ մինչև վարչական տույժի ժամկետը լրանալը» բառերը հանել:

Հոդված 9. Օրենքի 18-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «զենք» բառից հետո լրացնել «, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր, փամփուշտներ» բառերը:

Հոդված 10. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «, ռազմամարզական կազմակերպությունների և որսորդական տնտեսություն վարող» բառերը հանել,

2) 2-րդ մասից հանել «և ռազմամարզական» բառերը,

3) ուժը կորցրած ճանաչել 3-րդ մասը:

Հոդված 11. Օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասից հանել «հրաձգությամբ զբաղվող» բառերը:

Հոդված 12. Օրենքի 25-րդ հոդվածի 10-րդ մասից հանել «, ռազմամարզական» բառը:

Հոդված 13. Օրենքի 27-րդ հոդվածի 7-րդ մասից հանել «և զենքի անվանացանկը» բառերը:

Հոդված 14. Օրենքի 28-րդ հոդվածը լրացնել 23-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«23. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի սպայական կազմի զինծառայողներին սպայական դաշույնով պարգևատրելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 15. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) ուժը կորցրած ճանաչել Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը,

2) 3-րդ մասի 5-րդ կետից հանել «ռազմամարզական և» բառերը:

Հոդված 16. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը:

Հոդված 17. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հրամանը կընդունվի սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գանձված պետական տուրքերը, ինչպես նաև «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 11-րդ մասի 5-րդ կետով սահմանված բժշկական եզրակացությունները վավեր են սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Հոդված 1. «Զենքի շրջանառության կարգավորման մասին» 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՕ-368-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Սույն օրենքի դրույթները տարածվում են նաև զենքի փամփուշտների և հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի շրջանառության վրա:»:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետը:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, ռազմամարզության» բառը:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետից հանել «, ռազմամարզությամբ» բառը:

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 1-ին կետում «զենք» բառից հետո լրացնել «և հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր» բառերը, իսկ «թույլտվություն» բառը փոխարինել «թույլտվություններ» բառով,

2) 4-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագությամբ.

«1) քաղաքացիական զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր և փամփուշտներ ձեռք բերելու թույլտվություն՝ ինգօրյա գործողության ժամկետով.»,

3) 13-րդ մասում «բացառությամբ» բառից հետո լրացնել «2-րդ և» բառերը

4) 13-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից քաղաքացիական կամ ծառայողական զենք պահելու և կրելու գործող թույլտվություն ունենալու պայմաններում նոր զենք ձեռք բերելու, պահելու և կրելու թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության ոստիկանություն չեն ներկայացնում սույն հոդվածի 11-րդ մասի 2-րդ, 5-րդ և 7-րդ կետերով նշված փաստաթղթերը:»,

5) լրացնել 20-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«20. Սույն հոդվածի գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սպայական կազմի զինծառայողներին որպես պարգևատրում, ինչպես նաև զինվորական հանդերձանքի պարտադիր մաս կազմելու դեպքում՝ այլ զինծառայողներին ժամանակավորապես դաշույների (սպայական կազմի զինծառայողների մասով՝ այսուհետ՝ սպայական դաշույն) տրման վրա:»:

Հոդված 6. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «ռազմամարզական» բառը, ինչպես նաև «, որսորդական տնտեսություն վարող» բառերը հանել:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց բոլոր աշխատողները պարտավոր են երեք տարին մեկ անցնել զենքի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու՝ իրենց պիտանիությունը որոշող ստուգարքներ:» նախադասությունը, իսկ «անցկացնելու կարգը» բառերից հետո լրացնել «սահմանում է» բառերը:

Հոդված 8. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Բացառությամբ սառը և նետողական զենքերի, առաջին անգամ զենք, այդ թվում՝ առաջին անգամ ակոսափող հրազեն ձեռք բերող քաղաքացին, պարտավոր է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի բնագավառում պետական լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով հանձնել զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննություն: Քննությունից ազատվում է այն քաղաքացին, ով ծառայում է Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպություններում և ունի զենք պահելու և կրելու ~~թույլտվություն~~ **իրավունք**: Պետական մարմինների կողմից քննություն անցկացնելու դեպքում սահմանվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով:»,

2) 7-րդ մասի 7-րդ կետում «կանոնները» բառից հետո լրացնել «մեկ տարվա ընթացքում կրկնակի» բառերը, իսկ «՝ մինչև վարչական տույժի ժամկետը լրանալը» բառերը հանել:

Հոդված 9. Օրենքի 18-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «զենք» բառից հետո լրացնել «, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր, փամփուշտներ» բառերը:

Հոդված 10. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «, ռազմամարզական կազմակերպությունների և որսորդական տնտեսություն վարող» բառերը հանել,

2) 2-րդ մասից հանել «և ռազմամարզական» բառերը,

3) ուժը կորցրած ճանաչել 3-րդ մասը:

Հոդված 11. Օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասից հանել «հրաձգությամբ զբաղվող» բառերը:

Հոդված 12. Օրենքի 25-րդ հոդվածի 10-րդ մասից հանել «, ռազմամարզական» բառը:

Հոդված 13. Օրենքի 27-րդ հոդվածի 7-րդ մասից հանել «և զենքի անվանացանկը» բառերը:

Հոդված 14. Օրենքի 28-րդ հոդվածը լրացնել 23-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«23. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի սպայական կազմի զինծառայողներին սպայական դաշույնով պարգևատրելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքով սահմանված կարգով:»:

~~***Հոդված 14.***~~ ***<u>Հոդված 15.</u>*** Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) ուժը կորցրած ճանաչել Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը,

2) 3-րդ մասի 5-րդ կետից հանել «ռազմամարզական և» բառերը:

~~***Հոդված 15.***~~ ***<u>Հոդված 16.</u>*** Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը:

~~***Հոդված 16.***~~ ***<u>Հոդված 17.</u>*** Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հրամանը կընդունվի սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գանձված պետական տուրքերը, ինչպես նաև «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 11-րդ մասի 5-րդ կետով սահմանված բժշկական եզրակացությունները վավեր են սույն օրենքի 8-րդ

հոդվածի 1-ին կետով նախատեսված ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ 1-ԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-638-12.07.2023-ՊԱ-011/0) ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-638[1]-12.07.2023-ՊԱ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	***Կառավարություն***	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետում առաջարկվում է «թույլտվություն» բառը փոխարինել «իրավունք» բառով, քանի որ Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպություններում ծառայողներին տրվում է զենք պահելու և կրելու իրավունք, այլ ոչ թե՝ թույլտվություն:	**Ընդունվել է** Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետում «թույլտվություն» բառը փոխարինվել է «իրավունք» բառով:	**Ընդունվել է**
2.	***Կառավարություն***	Նախագծի 14-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ հոդվածներ	Առաջարկվում է Նախագծում առկա առաջին 14-րդ հոդվածից հետո համարակալումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներին:	**Ընդունվել է** Նախագծում առկա երկրորդ «Հոդված 14.» բառերը փոխարինվել են	**Ընդունվել է**

				«Հոդված 15.» բառերով, «Հոդված 15.» բառերը փոխարինվել են «Հոդված 16.» բառերով, իսկ «Հոդված 16.» բառերը փոխարինվել են «Հոդված 17.» բառերով:	

ՀՀ կառավարություն